ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ/265/2024

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 12 սեպտեմբերի 2024թ.

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, կազմով՝ Մարիամ Գալստյանի (նիստը նախագահող) Արամայիս Փաշինյանի և Լիլիթ Ալեքսանյանի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2024 թվականի սեպտեմբերի 12-ին քննելով «Հայ յեղափոխական դաշնակցություն» կուսակցության (այսուհետ՝ նաև Կուսակցություն) հաշվետու ժամանակահատվածում պաշտոնատար անձ՝ կուսակցության գերագույն մարմնի ներկայացուցիչ (այսուհետ՝ պաշտոնատար անձ), Իշխան Սաղաթելյանի կողմից Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 189.16-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված զանցանքի հատկանիշներով առերևույթ խախտման կապակցությամբ հարուցված վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ/265/2024 գործը՝

Պ Ա Ր Զ Ե Ց

I. Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը

1.1 Հանձնաժողովը, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 27-րդ կետով սահմանված Հանձնաժողովի լիազորությունների շրջանակներում, նույն օրենքի 40.1-ին հոդվածով սահմանված կարգով իրականացնելով նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով վերապահված գործառույթը և հիմք ընդունելով Կուսակցության 2022 թվականի տարեկան հաշվետվության (այսուհետ՝ Տարեկան հաշվետվություն) ստուգման և

աուդիտի արդյունքում վերհանված տվյալները, պարզել է, որ 2022 թվականի ընթացքում Կուսակցության կողմից չի պահպանվել «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Սահմանադրական օրենք) 24-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված՝ ֆիզիկական անձի կողմից կուսակցությանը տրվող, օրենքով սահմանված սահմանաչափը գերազանցող նվիրատվություններ ստանալուց հետո՝ երկու շաբաթվա ընթացքում կուսակցության համար սահմանված նվիրատվության գերազանցող մասը կամ նվիրատվությունն ամբողջությամբ նվիրատուին վերադարձնելու, իսկ դրա անհնարինության դեպքում՝ պետական բյուջե փոխանցելու պահանջը:

1.2 Հանձնաժողովի կողմից 2024 թվականի մարտի 19-ին Կուսակցությանն է ուղղվել թիվ 01/701-2024 գրությունը, որով Հանձնաժողովը խնդրել է Կուսակցության 2022 թվականի տարեկան հաշվետվության ստուգման նպատակով հնգօրյա ժամկետում Հանձնաժողովի պաշտոնական՝ info@cpcarmenia.am էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկելու միջոցով Հանձնաժողով ներկայացնել Կուսակցության 2022 հաշվետու տարվա բոլոր բանկային հաշիվների (բացառությամբ նախընտրական հիմնադրամների) վերաբերյալ տեղեկությունները, այդ թվում՝ բանկի կողմից վավերացված բանկային հաշիվների քաղվածքները, տարեկան հաշվետվության՝ «Պարտավորություններ» թերթի «3.2 Ստացված փոխառություններ» աղյուսակում ներկայացված գործարքների վերաբերյալ պայմանագրերը:

Ի լրումն վերոգրյալի՝ Հանձնաժողովը նշված գրությամբ խնդրել է Կուսակցության 2022 թվականի տարեկան հաշվետվության աուդիտորական եզրակացությամբ, ինչպես նաև «Նամակ ղեկավարությանը» փաստաթղթով հայտնաբերված անհամապատասխանությունների և խախտումների հետ անհամաձայնության դեպքում ներկայացնել դրանց վերաբերյալ Կուսակցության դիրքորոշումն արտահայտող լրացուցիչ տեղեկություններ և փաստաթղթեր:

Հանձնաժողովը նշված գրությամբ միաժամանակ հայտնել է Օրենսգրքի 206.14-րդ հոդվածով նախատեսված վարչական պատասխանատվության մասին՝ Հանձնաժողովին սահմանված ժամկետում անհրաժեշտ տեղեկությունները կամ պահանջվող նյութերը չտրամադրելու համար:

1.3 Ի պատասխան Հանձնաժողովի 2024 թվականի մարտի 19-ի թիվ 01/701-2024 գրության՝ 2024 թվականի մարտի 27-ին Կուսակցության կողմից Հանձնաժողովի

էլեկտրոնային փոստի հասցեին է ներկայացվել պահանջվող տեղեկատվությունը, այդ թվում նաև՝ 2022 հաշվետու տարվա կուսակցության բոլոր բանկային հաշիվների քաղվածքները և տարեկան հաշվետվությամբ ներկայացված գործարքների վերաբերյալ պայմանագրերը: Միաժամանակ, Կուսակցությունը հայտնել է, որ 2022թ. ՀՅԴ կուսակցությունում անցկացված աուդիտի վերապահումով կարծիքն ընդունվել է և քայլեր են ձեռնարկվում կուսակցության մշտապես գործող ղեկավար կազմի պետական գրանցման ուղղությամբ:

1.4 Աուդիտորական ծառայությունների մատուցման արդյունքում տրվել է անկախ աուդիտորի եզրակացություն՝ վերապահումով կարծիք (այսուհետ՝ Աուդիտորական եզրակացություն), որից հետո Հանձնաժողովը, ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 40.1-ին հոդվածով սկսել է Տարեկան հաշվետվության ստուգումը:

1.5 Տարեկան հաշվետվության ստուգմամբ պարզ է դառնում, որ Կուսակցությունը հաշվետու տարում չի ներկայացրել որևէ անձից դրամական նվիրատվություն ստանալու վերաբերյալ տվյալ, մինչդեռ ներկայացրել է ընդհանուր 21,442,500 ՀՀ դրամի չափով ստացված փոխառությունների մայր գումարների մնացորդ, ընդ որում՝ 2 ֆիզիկական անձանցից, որոնցից 2-ն էլ հանդիսանում են Կուսակցության աշխատակիցներ:

1.6 Հանձնաժողովի կողմից Կուսակցության բանկային հաշիվների քաղվածքների ստուգման արդյունքում պարզ է դարձել, որ հաշվետու տարում Կուսակցության՝ [redacted] և [redacted] բանկային հաշիվներին Ներսես Տեր-Պետրոսյանի կողմից մուտքագրվել են ստորև նշված դրամական միջոցները՝

1) 2022 թվականի փետրվարի 9-ին 7,200,000 ՀՀ դրամ կանխիկ դրամական միջոցների մուտք, նպատակը՝ համաձայն փոխառության պայմանագրի,

2) 2022 թվականի փետրվարի 17-ին 600,000 ՀՀ դրամ կանխիկ դրամական միջոցների մուտք, նպատակը՝ անդամավճար Կոտայքի ՄԿ,

3) 2022 թվականի փետրվարի 17-ին 367,000 ՀՀ դրամ դրամական միջոցների մուտք, նպատակը՝ անդամավճար՝ ուսանողական միությունից,

4) 2022 թվականի մայիսի 27-ին 700,000 ՀՀ դրամ կանխիկ դրամական միջոցների մուտք, նպատակը՝ փոխառություն,

5) 2022 թվականի հունիսի 20-ին 1,700,000 ՀՀ դրամ կանխիկ դրամական միջոցների մուտք, նպատակը՝ կանխիկ միջոցների մուտք ՀՀ դրամով,

6) 2022 թվականի հունիսի 29-ին 400,000 ՀՀ դրամ կանխիկ դրամական միջոցների մուտք, նպատակը՝ փոխառություն,

7) 2022 թվականի հուլիսի 18-ին 1,400,000 ՀՀ դրամ կանխիկ դրամական միջոցների մուտք, նպատակը՝ փոխառություն,

8) 2022 թվականի հուլիսի 25-ին 1,200,000 ՀՀ դրամ կանխիկ դրամական միջոցների մուտք, նպատակը՝ կանխիկ միջոցների մուտք ՀՀ դրամով,

9) 2022 թվականի օգոստոսի 16-ին 1,300,000 ՀՀ դրամ կանխիկ դրամական միջոցների մուտք, նպատակը՝ համաձայն փոխառության պայմանագրի,

10) 2022 թվականի օգոստոսի 22-ին 2,350,000 ՀՀ դրամ կանխիկ դրամական միջոցների մուտք, նպատակը՝ փոխառություն,

11) 2022 թվականի օգոստոսի 23-ին 1,260,000 ՀՀ դրամ կանխիկ դրամական միջոցների մուտք, նպատակը՝ կանխիկ միջոցների մուտք ՀՀ դրամով,

12) 2022 թվականի սեպտեմբերի 15-ին 1,620,000 ՀՀ դրամ կանխիկ դրամական միջոցների մուտք, նպատակը՝ փոխառություն,

13) 2022 թվականի սեպտեմբերի 22-ին 389,000 ՀՀ դրամ կանխիկ դրամական միջոցների մուտք, նպատակը՝ անդամավճար,

14) 2022 թվականի սեպտեմբերի 30-ին 1,200,000 ՀՀ դրամ կանխիկ դրամական միջոցների մուտք, նպատակը՝ կանխիկ միջոցների մուտք ՀՀ դրամով,

15) 2022 թվականի նոյեմբերի 29-ին 1,500,000 ՀՀ դրամ կանխիկ դրամական միջոցների մուտք, նպատակը՝ փոխառություն,

16) 2022 թվականի դեկտեմբերի 19-ին 1,100,000 ՀՀ դրամ կանխիկ դրամական միջոցների մուտք, նպատակը՝ փոխառություն,

17) 2022 թվականի դեկտեմբերի 21-ին 112,500 ՀՀ դրամ կանխիկ դրամական միջոցների մուտք, նպատակը՝ փոխառություն,

18) 2022 թվականի դեկտեմբերի 22-ին 1,200,000 ՀՀ դրամ կանխիկ դրամական միջոցների մուտք, նպատակը՝ փոխառություն:

Այսինքն, 2022 թվականի ընթացքում Ներսես Տեր-Պետրոսյանից Կուսակցության բանկային հաշիվներին մուտքագրվել է ընդհանուր՝ 25,598,500 ՀՀ դրամ գումար:

1.7 Համադրելով Կուսակցության 2021 թվականի տարեկան հաշվետվության «Պարտավորություններ» թերթի «3.2 Ստացված փոխառություններ» աղյուսակում լրացված տվյալները 2022 թվականին մուտքագրված դրամական միջոցների հետ՝ պարզ է դառնում, որ 2021 թվականին Կուսակցության և Ներսես Տեր-Պետրոսյանի միջև կնքվել են հետևյալ պայմանագրերը 2021 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ հետևյալ մնացորդներով՝

1) 2021 թվականի մարտի 3-ին, փոխառության գումարը՝ 1,600,000 ՀՀ դրամ,

2) 2021 թվականի հունիսի 17-ին, փոխառության գումարը՝ 14,500,000 ՀՀ դրամ:

Կուսակցության՝ 2022 թվականի Տարեկան հաշվետվությունում վերը նշված՝ 2021 թվականի մարտի 3-ին կնքված փոխառության պայմանագրի վերաբերյալ տվյալներ լրացված չեն, ինչը նշանակում է, որ այդ պայմանագրով նախատեսված՝ 1,600,000 ՀՀ դրամ փոխառության գումարը հետ է վերադարձվել Ներսես Տեր-Պետրոսյանին 2022 թվականի ընթացքում, իսկ մյուս՝ 2021 թվականի հունիսի 17-ին կնքված փոխառության պայմանագրի վերաբերյալ տվյալներ լրացված են նաև Կուսակցության՝ 2022 թվականի Տարեկան հաշվետվությունում, սակայն մայր գումարի մնացորդի չափը լրացված է 5,700,000 ՀՀ դրամ, ինչը նշանակում է, որ պայմանագրային գումարի՝ 14,500,000 ՀՀ դրամի և 2022 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա մայր գումարի մնացորդի՝ 5,700,000 ՀՀ դրամի տարբերությունը՝ 8,800,000 ՀՀ դրամը հետ է վերադարձվել Ներսես Տեր-Պետրոսյանին 2022 թվականի ընթացքում:

2022 թվականի ընթացքում Ներսես Տեր-Պետրոսյանից Կուսակցության բանկային հաշիվներին մուտքագրված՝ ընդհանուր 25,598,500 ՀՀ դրամ գումարից 7,092,500 ՀՀ դրամը, ըստ Կուսակցության Տարեկան հաշվետվության և Հանձնաժողովի գրավոր հարցմանն ի պատասխան տրամադրված փոխառության պայմանագրերի, հանդիսանում է Ներսես Տեր-Պետրոսյանից 2022 թվականի ընթացքում ստացված փոխառությունների ընդհանուր գումարը, 1,356,000 ՀՀ դրամը Տարեկան հաշվետվությամբ ներկայացվել է որպես այլ անձանցից ստացված անդամավճարներ, իսկ մնացած՝ 17,150,000 ՀՀ դրամ գումարը, համաձայն տրամադրված բանկային քաղվածքների, հանդիսանում են Կուսակցությանը փոխանցված դրամական միջոցներ:

Արդյունքում, 2022 թվականի բանկային հաշիվների ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել, որ որպես փոխառություն ստացված 7,092,500 ՀՀ դրամի

չափով գումարը հետ չի վերադարձվել Ներսես Տեր-Պետրոսյանին, ինչը գերազանցում է Սահմանադրական օրենքով սահմանված առավելագույն սահմանաչափը 4,592,500 ՀՀ դրամի չափով:

1.8 Հաջորդիվ, ստուգմամբ պարզվել է, որ Վահագն Մատինյանի և Կուսակցության միջև հաշվետու տարում կնքվել են փոխառության 6 (վեց) պայմանագրեր, մասնավորապես՝

1) 2022 թվականի հուլիսի 18-ին, փոխառության գումարի չափը՝ 1,400,000 ՀՀ դրամ,
2) 2022 թվականի հուլիսի 25-ին, փոխառության գումարի չափը՝ 1,200,000 ՀՀ դրամ,
3) 2022 թվականի օգոստոսի 16-ին, փոխառության գումարի չափը՝ 1,300,000 ՀՀ դրամ,
4) 2022 թվականի օգոստոսի 22-ին, փոխառության գումարի չափը՝ 2,350,000 ՀՀ դրամ,
5) 2022 թվականի նոյեմբերի 29-ին, փոխառության գումարի չափը՝ 1,500,000 ՀՀ դրամ,
6) 2022 թվականի դեկտեմբերի 22-ին, փոխառության գումարի չափը՝ 1,200,000 ՀՀ դրամ:

Վահագն Մատինյանի և Կուսակցության միջև, ըստ Հանձնաժողով ներկայացված պայմանագրերի, հաշվետու տարում կնքվել է ընդհանուր՝ 8,950,000 ՀՀ դրամի չափով փոխառության պայմանագրեր, որոնց մնացորդների **ընդհանուր չափը, ըստ Տարեկան հաշվետվության, հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 8,650,000 ՀՀ դրամ:**

Այսինքն, հաշվետու տարում կնքված պայմանագրերի հիման վրա Վահագն Մատինյանից ստացված՝ 8,950,000 ՀՀ դրամ փոխառության գումարներից հաշվետու տարում հետ է վերադարձվել 300,000 ՀՀ դրամը, իսկ չվերադարձված մասը կազմել է 8,650,000 ՀՀ դրամ, ինչը գերազանցում է Սահմանադրական օրենքով սահմանված առավելագույն սահմանաչափը 6,150,000 ՀՀ դրամի չափով:

Ինչ վերաբերում է Կուսակցության բանկային հաշիվների քաղվածքների ուսումնասիրությանը, ապա դրա արդյունքում Կուսակցության բանկային հաշիվներին Վահագն Մատինյանի կողմից դրամական միջոցներ մուտքագրելու վերաբերյալ տվյալներ չեն հայտնաբերվել:

1.9 Վերոնշյալ իրավախախտման հայտնաբերմամբ պայմանավորված՝ Հանձնաժողովը 2024 թվականի օգոստոսի 22-ի թիվ 01/2009-2024 գրությամբ Կուսակցության պաշտոնատար անձ Իշխան Սաղաթելյանին ուղարկել է ծանուցում՝ Կուսակցության կողմից օրենքով սահմանված չափից ավելի նվիրատվությունն օրենքով սահմանված ժամկետներում պետական բյուջե կամ նվիրատուին չփոխանցելու զանցանքի հատկանիշներով առերևույթ իրավախախտման վերաբերյալ՝ հրավիրելով վերջինիս Հանձնաժողով՝ ծանուցումը ստանալուն հաջորդող 5-րդ աշխատանքային օրը՝ ժամը 14:30-ին՝ մասնակցելու Օրենսգրքի 189.16-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտման հատկանիշներով վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելուն, իսկ 2024 թվականի սեպտեմբերի 12-ին՝ ժամը 15:30-ին՝ առերևույթ իրավախախտման հիմքով կազմված արձանագրության և վերաբերելի նյութերի հիման վրա վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությանը մասնակցելու: Իշխան Սաղաթելյանի կողմից նշված գրությունը ստացվել է 2024 թվականի օգոստոսի 26-ին:

1.10 Վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելու վայրի և ժամի մասին պատշաճ ծանուցված Կուսակցության պաշտոնատար անձ Իշխան Սաղաթելյանը չի ներկայացել Հանձնաժողով, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը, ինչպես նաև մինչև վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելը չի ներկայացրել միջնորդություն այն հետաձգելու համար: 2024 թվականի սեպտեմբերի 2-ին պատշաճ ծանուցված Իշխան Սաղաթելյանի բացակայությամբ կազմվել է թիվ ՎԻՎ/641/2024 արձանագրությունը՝ Օրենսգրքի 189.16-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավախախտման հատկանիշներով:

1.11 Կուսակցության կողմից 2024 թվականի սեպտեմբերի 9-ին Հանձնաժողով ներկայացված ՀԾ-հաշվապահական ծրագրից արտահանված Т հաշիվներից և նախորդիվ ներկայացված բանկային հաշիվների քաղվածքների ուսումնասիրությամբ պարզվել է, որ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությամբ հաստատված օրենքով սահմանված չափից ավելի նվիրատվությունները վերադարձվել են Ներսես Տեր-Պետրոսյանին և Վահագն Մատինյանին՝ յուրաքանչյուրին իր կողմից կատարված ավել նվիրատվության չափով:

Կուսակցության կողմից ներկայացված բանկային հաշիվների քաղվածքների ուսումնասիրությամբ պարզվել է, որ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությամբ հաստատված օրենքով սահմանված չափից ավելի նվիրատվությունները վերադարձվել են Ներսես Տեր-Պետրոսյանին և Վահագն Մատինյանին՝ յուրաքանչյուրին իր կողմից կատարված ավել նվիրատվության չափով:

1.12 Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության տեղի և ժամանակի մասին պատշաճ ծանուցված (հիմք՝ AL0124135737AM հետադարձ հանձնման ծանուցագիր) Իշխան Սաղաթելյանի ներկայացուցիչներ Արծվիկ Մինասյանի և Ներսես Տեր-Պետրոսյանի ներկայությամբ 2024 թվականի սեպտեմբերի 12-ին՝ ժամը 15:30-ին տեղի է ունեցել վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննություն:

II. Վարույթի մասնակցի ներկայացրած դիրքորոշում ու պարզաբանումներ

Իշխան Սաղաթելյանը 2024 թվականի սեպտեմբերի 9-ին Հանձնաժողով մուտքագրված թիվ Մ-3973-2024 գրությամբ հայտնել է, որ Կուսակցությունն ընթացիկ ֆինանսական խնդիրներ լուծելու նպատակով 2022թ. վերցրել է փոխառություններ, որոնց համար կնքվել են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 877-րդ և 878-րդ հոդվածների պահանջներից բխող գրավոր փոխառության պայմանագրեր: Միաժամանակ նշել է, որ 2023-2024թթ. փոխառություններն ամբողջությամբ մարվել են գումարները փոխատուների բանկային հաշիվներին փոխանցելու միջոցով: Կից ներկայացրել է փոխատուների հետ կնքված փոխառության պայմանագրերի պատճենները և ՀԾ-հաշվապահական ծրագրից արտահանված Ներսես Տեր-Պետրոսյանի և Վահագն Մատինյանի Т հաշիվները:

Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության ընթացքում վարույթի մասնակից Իշխան Սաղաթելյանի ներկայացուցիչ Արծվիկ Մինասյանը հաստատեց 2024 թվականի սեպտեմբերի 9-ին Հանձնաժողով մուտքագրված թիվ Մ-3973-2024 գրությամբ ներկայացրած պարզաբանումը:

III. Գործի քննության ընթացքում հաստատված հանգամանքները

Հանձնաժողովն ուսումնասիրել է թիվ ՎԻՎ/265/2024 գործում առկա նյութերը, Կուսակցության Տարեկան հաշվետվությամբ ներկայացված տվյալները՝ համադրելով

դրանք Կուսակցության բանկային հաշիվների քաղվածքների, ՀԾ-հաշվապահական ծրագրից արտահանված Т հաշիվների հետ և հաշվի առնելով Աուդիտորական եզրակացությամբ հայտնաբերված առերևույթ խախտումները՝ կատարել հանգամանքների քննություն, որի արդյունքում հաստատված է համարում.

3.1 2022 թվականի ընթացքում Կուսակցության պաշտոնատար անձ Իշխան Սաղաթելյանի կողմից չեն պահպանվել Սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված՝ ֆիզիկական անձի կողմից կուսակցությանը տրվող, օրենքով սահմանված սահմանաչափը գերազանցող նվիրատվություններ ստանալուց հետո՝ երկու շաբաթվա ընթացքում կուսակցության համար սահմանված նվիրատվության գերազանցող մասը կամ նվիրատվությունն ամբողջությամբ նվիրատուին վերադարձնելու, իսկ դրա անհնարինության դեպքում՝ պետական բյուջե փոխանցելու պահանջը:

Վերջինիս կողմից 2022 թվականի ընթացքում օրենքով սահմանված ժամկետում կուսակցության համար սահմանված նվիրատվության գերազանցող մաս կազմող ընդհանուր 10,742,500 (տասը միլիոն յոթ հարյուր քառասուներկու հազար հինգ հարյուր) ՀՀ դրամը կամ նվիրատվությունն ամբողջությամբ չի վերադարձվել նվիրատուներին, իսկ դրա անհնարինության դեպքում՝ պետական բյուջե:

3.2 Մինչև վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության նշանակված օրը Կուսակցության կողմից 10,742,500 (տասը միլիոն յոթ հարյուր քառասուներկու հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ օրենքով սահմանված չափից ավել կազմող նվիրատվության գումարը վերադարձվել է նվիրատուներին:

3.3 Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի էլեկտրոնային միասնական գրանցամատյանում առկա տվյալների համաձայն՝ 2019 թվականի հունիսի 17-ից Իշխան Վաչիկի Սաղաթելյանը հանդիսանում է Կուսակցության գործադիր մարմնի ղեկավարը՝ գերագույն մարմնի ներկայացուցիչը:

IV. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը և հիմնավորումները

4.1 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովի գործառույթներն են՝

«Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքով սահմանված դեպքերում և կարգով կուսակցությունների ընթացիկ ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողության իրականացումը, ներառյալ՝ կուսակցությունների ֆինանսական միջոցների աղբյուրների և ծախսերի, ինչպես նաև գույքի մասին տարեկան հաշվետվությունների (այսուհետ՝ կուսակցությունների տարեկան հաշվետվություններ) ներկայացման պահանջների պահպանման և դրանցում առկա տեղեկատվության և տվյալների արժանահավատության և ամբողջականության ստուգումը:

4.2 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 27-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը ստուգում է կուսակցությունների տարեկան հաշվետվությունների ներկայացման պահանջների պահպանումը և դրանցում առկա տեղեկատվության և տվյալների արժանահավատությունն ու ամբողջականությունը:

4.3 Սահմանադրական օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կուսակցությունների ընթացիկ ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողությունը, ներառյալ՝ կուսակցությունների տարեկան հաշվետվության ստուգումն իրականացնում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը՝ սույն օրենքով և «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով սահմանված կարգով:

4.4 Սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Կուսակցությանը տրվող նվիրատվության, ինչպես նաև անդամավճարի և մուտքի վճարի ընդհանուր չափը՝ դրամական արտահայտությամբ, մեկ տարվա ընթացքում չի կարող գերազանցել օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրհազարապատիկը, այդ թվում՝ մեկ ֆիզիկական անձի կողմից՝ օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարհինգհարյուրապատիկը:

4.5 Սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված չափը գերազանցող նվիրատվությունների ստացման դեպքում կուսակցությունը պարտավոր է ստանալուց հետո՝ երկու շաբաթվա ընթացքում, կուսակցության համար սահմանված նվիրատվության, անդամավճարի կամ մուտքի վճարի սահմանված չափը գերազանցող մասը կամ նվիրատվությունն ամբողջությամբ վերադարձնել նվիրատուին, իսկ դրա անհնարինության դեպքում՝ փոխանցել պետական բյուջե:

4.6 Օրենսգրքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն օրենսգրքի իմաստով՝ կուսակցության պաշտոնատար անձ է համարվում կուսակցության կանոնադրության կամ այլ փաստաթղթերի հիմքով՝ սույն օրենսգրքով պատասխանատվություն առաջացնող գործողությունների (անգործության) համար պատասխանատու կուսակցության ղեկավար մարմնի անդամը կամ կուսակցության՝ կազմակերպական-տնօրինչական, վարչատնտեսական գործառույթներ իրականացնող պատասխանատու անդամը կամ աշխատողը:

4.7 Օրենսգրքի 189.16-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Կուսակցությունների կողմից օրենքով սահմանված չափից ավելի կամ չթույլատրված նվիրատվությունները օրենքով սահմանված ժամկետներում պետական բյուջե կամ նվիրատուին չփոխանցելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում կուսակցության պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև հարյուրհիսնապատիկի չափով:

4.8 Օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ սույն օրենսգրքի 166.1-ին, 169.28-րդ, 169.31-րդ, 189.13-րդ, 189.14-րդ, 189.15-րդ, 189.16-րդ, 189.19-189.24-րդ, 206.14-րդ հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը:

4.9 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները:

4.10 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի արդյունքում ընդունում է որոշումներ, որոնք կարող են բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական

վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ դատական կարգով:

4.11 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

4.12 Օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինը ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

4.13 Օրենսգրքի 275-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննության նախապատրաստելիս մարմինը (պաշտոնատար անձը) լուծում է հետևյալ հարցերը՝

1) տվյալ գործի քննությունը վերաբերում է, արդյոք, իր իրավասությանը.

2) ճիշտ են կազմվել, արդյոք, վարչական իրավախախտման վերաբերյալ գործի արձանագրությունը և մյուս նյութերը.

3) գործի քննությանը մասնակցող անձինք ծանուցվել են, արդյոք, դրա քննության ժամանակի և տեղի մասին.

4) պահանջվել են, արդյոք, անհրաժեշտ լրացուցիչ նյութեր.

5) վարչական պատասխանատվության ենթարկվող անձի, տուժողի, օրինական ներկայացուցիչների, փաստաբանի միջնորդությունների մասին:

4.14 Օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝ 1) վարչական տույժ նշանակելու մասին, 2) գործի վարույթը կարճելու մասին: Գործի վարույթը կարճելու մասին որոշում ընդունվում է նաև բանավոր դիտողություն հայտարարելու դեպքում:

Սույն գործով հաստատված փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի իրավական նորմերի վերլուծության արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է.

Օրենսգրքի 189.16-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դրույթը նպատակ է հետապնդում ապահովել հաշվետու տարվա ընթացքում Կուսակցության ֆինանսական միջոցների և ծախսերի վերաբերյալ հանրային հաշվետվողականությունը, կոռուպցիոն ռիսկերից զերծ գործունեությունը: Նշված դրույթի նպատակն է **բոլոր կուսակցությունների համար հավասար հնարավորությունների ապահովումը, ինչպես նաև բոլոր կուսակցությունների ֆինանսական խոցելիության նվազեցման երաշխիքների ապահովումը:**

Նշված դրույթը նպատակ է հետապնդում վերացնել կոռուպցիոն այնպիսի ռիսկեր, ինչպիսիք են, օրինակ, կուսակցության ղեկավար մարմնի անդամի կողմից օրենքով սահմանված չափը գերազանցող նվիրատվության ներգրավումը: Այս զանցակազմի օբյեկտիվ կողմը կարող է դրսևորվել կուսակցության ղեկավար մարմնի անդամի ակտիվ, նախաձեռնողական գործողություններով, երբ վերջիններս ձեռնարկում են կուսակցության օգտին օրենքով սահմանված չափը գերազանցող նվիրատվությունների ներգրավումը կամ պարզապես համաձայնություն են տալիս այդպիսի առաջարկություններին:

Հարկ է ընդգծել, որ Օրենսդրի կողմից նման կարգավորումների՝ սահմանադրական օրենքով ամրագրումն ինքնանպատակ չէ և միտված է կարգավորելու կուսակցությունների մուտքերը՝ կանխելու կուսակցությունների կախվածությունը անհատներից, նպաստելու կուսակցությունների միջև ավելի հավասար պայմանների ապահովմանը, սահմանափակելու կուսակցությունների վրա անտեղի ազդեցությունը, խթանելով արդարությունը և նվազեցնելով կոռուպցիայի ռիսկը: Նման կարգավորումների պայմաններում սահմանափակվում են անհատական ներդրումները, ինչը խթանում է քաղաքական գործընթացներում լայն հասարակության ավելի մեծ ներգրավվածությունը և մասնակցությունը:

Միաժամանակ, անհատների կողմից մեծածավալ նվիրատվությունները կարող են հանգեցնել արտոնյալ վերաբերմունքի կամ քաղաքական որոշումների վրա ազդեցության ակնկալիքների և վերը նշված նորմով մեղմվում են նման ռիսկերը՝ դրանով իսկ նպաստելով քաղաքական գործընթացների ամբողջականությանը:

Միաժամանակ, նշված նորմի նպատակն է նաև առանձին անհատների կողմից կուսակցությունների ամբողջական գործունեության ֆինանսավորումից խուսափելը, առանձին կուսակցությունների՝ մեծ կարողություններ ունեցող անհատների ակումբերի

վերածվելու հնարավորության բացառումը, ինչից ելնելով էլ Օրենսդրի կողմից սահմանվել է անհատների նվիրատվության առավելագույն շեմի սահմանաչափ:

Խախտման հիմքով պատասխանատվություն սահմանելու հարցը որոշելու համար Հանձնաժողովը գտնում է, որ անհրաժեշտ է յուրաքանչյուր գործով գնահատել, արդյո՞ք տվյալ խախտումը հանգեցրել է նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների խաթարմանը: Այս առնչությամբ էական է խախտման (արարքի) որակական կողմը:

Արարքի որակական կողմը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել՝ արդյոք արարքը կարող է պարունակել Օրենսգրքով սահմանված արարքի հատկանիշներ և այնպիսի էական վնաս է պատճառել ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը, պետությանը, որի հիմքով սահմանված պատասխանատվությունը կդիտարկվի համաչափ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 21-րդ հոդվածը սահմանել է, որ եթե կատարված վարչական իրավախախտումը նվազ նշանակություն ունի, գործը վճռելու համար լիազորված մարմինը (պաշտոնատար անձը) կարող է խախտողին ազատել վարչական պատասխանատվությունից և բավարարվել բանավոր դիտողությամբ:

Արարքի նվազ նշանակությունը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ թեև ձևականորեն արարքը կարող է պարունակել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով սահմանված արարքի հատկանիշներ, սակայն ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը, պետությանը այնպիսի էական վնաս չի պատճառվել, որի հիմքով սահմանված պատասխանատվությունը դիտարկվի համաչափ:

Նվազ նշանակությունը կիրառելիս անհրաժեշտ է հաշվի առնել խախտման բնույթը, դրա որակական կողմը, ինչպես նաև խախտում թույլ տված անձի վերաբերմունքը խախտման նկատմամբ:

Սույն գործով խախտման (արարքի) որակական կողմը գնահատելիս Հանձնաժողովն էական է համարում հետևյալ **հանգամանքների միաժամանակյա առկայությունը.**

1.Օրենսգրքի 189.16-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավախախտումների գործերով քննության իրավասությունը Հանձնաժողովին վերապահելուց հետո, նշված

դրույթը խախտված լինելու առնչությամբ արարքը հայտնաբերվել և նշված խախտման կապակցությամբ ծանուցում է ներկայացվել առաջին անգամ:

2. Մինչև վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության օրը Կուսակցության կողմից վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությամբ հաստատված 10,742,500 (տասը միլիոն յոթ հարյուր քառասուներկու հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ՝ օրենքով սահմանված չափից ավելի նվիրատվությունը վերադարձվել է նվիրատուներին, որի վերաբերյալ ապացույցը ներկայացվել է Հանձնաժողով:

Վերոնշյալ հանգամանքների **համակցությամբ** պայմանավորված՝ սույն գործով օրենքով սահմանված չափից ավելի նվիրատվության գումարը նվիրատուին փոխանցելու փաստը վկայող ապացույցը ներկայացնելու արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է, որ նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների էությունը չի խաթարվել:

Ելնելով վերոգրյալից, ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 21-րդ հոդվածի 1-ին մասով, 282-րդ հոդվածի 2-րդ կետով և 283-րդ հոդվածով՝ Հանձնաժողովը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Հայ յեղափոխական դաշնակցություն» կուսակցության պաշտոնատար անձ Իշխան Սաղաթելյանին ազատել վարչական պատասխանատվությունից և հայտարարել բանավոր դիտողություն՝ կարճելով թիվ ՎԻՎ/265/2024 վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն սահմանված կարգով Իշխան Սաղաթելյանին հանձնելու (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ